ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-6-8-Ա

ք. Երևան 10.07.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հուլիսի 10-ի նիստում քննարկեց 2025 թվականի հունվարի 3-ին հայտատուի ներկայացուցիչ Արա Խզմալյանի կողմից ներկայացված՝ «Իմսիրուն» ՓԲԸ ընկերության (Երևան, Բաղրամյան պ., շ. 2, տարածք 88, AM) «իմսիրուն» (No20231858) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում և որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 44-րդ դասի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «SIROON skin bar», «Siroon», «eden by Siroon Minas, MD», «սիրուն» (Սիրուն Իսկեն Մինաս, Երևան, Մամիկոնյանց 51, բն. 17, N 37674, 26.07.2023, N 35367, 16.08.2022, N 35096, 28.06.2022, N 36481, 25.01.2023, N 39541, 25.04.2024) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 115-րդ կետի, 119-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի, 124-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության,

իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն ձայնային նմանություն և հնչում են նույնատիպ՝ չնայած դրանց լատինատառ և հայատառ ներկայացված լինելու հանգամանքին: Ինչպես նաև, ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի մաս կազմող «սիրուն» բառն ամբողջությամբ ներառված է հայտարկված նիշի մեջ, կազմելով նրա վերջնամասը՝ «իմսիրուն»: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Siroon Minas, MD», «Siroon SkinBar», «EDEN by Siroon Minas, MD», «Siroon Skin Clinic» ապրանքային նշանների նկատմամբ, որոնց վերաբերյալ տվյալները տեղադրված են https://www.facebook.com/drsiroonminas,
https://www.facebook.com/profile.php?id=100091841348811,
https://www.facebook.com/eden.by.siroon.minas,
https://www.facebook.com/profile.php?id=100094925623019 ինտերնետային կայքերում, և որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական տեսակետը այն մասին, որ կարիք ունեն լսելու բողոքարկողի պարզաբանումները հարցի վերաբերյալ վերջնական կարծիք կազմելու համար: Բողոքարկողի պարզաբանումները լսելուց հետո բողոքարկման խորհրդի անդամների մի մասը արտահայտեցին իրենց կարծիքը այն մասին, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի

կամ արտադրողի վերաբերյալ հարցերում և որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 44-րդ դասի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «SIROON skin bar», «Siroon», «eden by Siroon Minas, MD», «սիրուն» (Սիրուն Իսոկեն Մինաս, Երևան, Մամիկոնյանց 51, բն. 17, N 37674, 26.07.2023, N 35367, 16.08.2022, N 35096, 28.06.2022, N 36481, 25.01.2023, N 39541, 25.04.2024) բառային և համակցված ապրանքային նշաններին: Բողոքարկման խորհրդի անդամների մյուս մասը ունեին այն կարծիքը, որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման չէ փորձաքննության որոշման մեջ նշված գրանցված ապրանքային նշաններին և կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում մեկ դեմ, երկու ձեռնպահ և վեց կողմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Արա Խզմալյանի կողմից ներկայացված «Իմսիրուն» ՓԲԸ ընկերության «իմսիրուն» (No20231858) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ